

Շք. Տօն Ամենայն Արքոց: Իմաստ 3.1-8: Ես

33.5-8: Եբբ 11.32--12.2: Ղկ 12.4-9:

Ազգեր իրենց հերոսներն ու համնարներն ունին, որոնք այս կամ այն եղանակով օգտակար եղած են իրենց հայրենիքին կամ բարձր պահած անոր պատիւը դարերու մէջէն: Ու յաջորդ սերունդներ՝ ի հշան երախտագիտութեան, կամ անոնց օրինակէն քառագայթոյ սգիովը տագարուելու համար՝ կը սարքեն տարեկան կամ պարբերական հանդիսութիւններ պանծացնելով անոնց գործն ու անձը: Ունին իրենց պատմութեան մեծ թուականները, երբ ամբողջ ազգը համակուած բարձր գաղափարակաւ մը ռոքի կեցած է համախումբ շունչով մը զայն իրագործելու համար: Ու անոնց շաւղներէն քաղուողներ կը ջանան վերապրիլ ամէն տարի այդ մեծ թուականները՝ տարեդարձի շքեղ հանդիսակատարութիւններով:

Մարդերէ կազմուած ընկերութիւն մըն է նաեւ Եկեղեցին, թէ իսկ իր արմատները հաստատուած ըլլան աստուածային կամ գերբնական հիմքերու վրայ: Ա՛ն ալ ունեցած է իր հերոսները, առաքիւնութեան եւ սրբութեան իր մեծ տխարները, անձնուրաց գործիչները ու իր պատմութեան մեծ թուականները. եւ անոնք ամբողջ մարդկային պատմութեան մեծագոյններէն եղած են իրենց տեսակին մէջ, յեղաշրջելու աստիճան մարդկութեան ճակատագիրը: Ու Եկեղեցին իրաւունքով եւ պարծանքով կը սովորեցնէ անոնց յիշատակը իրե՛ն յատուկ կերպերով: Այսպէս՝ անոնք որ ապրած են իր ծոցին մէջ՝ համաձայն Աւետարանի չափանիշներուն, անոնք որ իրենց արեան գիւնով բարձրադասակ յայտարարած են աշխարհին թէ Քրիստոնէութիւնն է գերազանցասէս Ոչմարիտ կրօնքը, անոնք որ աննահանջ ախոյեանները հանդիսացած են Ուղղափառութեան ընդդէմ ի՛ր իսկ ծոցէն յատուցացած աղանդական մարտութեանց, եւ վերջապէս անոնք որ իրենց տաղանդն ու ձիրքերը, իրենց գրիչն ու խօսքը, իրենց կեանքն ու գործը ի սպաս դրած են Եկեղեցիի պայծառութեան եւ հոգիներու փրկութեան գործին, արժանի դատուած են Եկեղեցիի կողմէ յաւերժական յիշատակութեան: — «Արքոց վարէ՛քերուն նպասակն է այս կարգի մարդիկը ծանօթացնել հանրութեան:

† Կիր. Ը. Կիրակե գկնի Ս. Խաչին: Ես  
22.15-25: Եփ 1.1-14: Ղկ 8.17-21:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ


ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(8.17-21)

LUKE

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ. —

- 17 «Չկայ ծածուկ բան մը որ չյայտնուի եւ կամ  
18 գաղտնի բան մը՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ: Ուրի՜մն  
ուշադիր եղէ՞ք թէ ի՞նչպէս կ'ընդունիք այս խօսքերը,  
որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն  
պիտի աւնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ու-  
նի»:
- 19 Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց  
խուռն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտե-  
20 նալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ եւ եղ,  
21 ներդ պուրան են եւ կ'ուզեն քեզ տեսնել»: Յիսուս  
«Մայրս ու եղբայրներս անոնք են որոնք Աստ  
խօսքը կը ըսեն եւ կը գործադրեն»:



ՅԻՍՈՒՍ  
ԱՇԵՈՐԴԻ ԼՈՅՏԸ

<sup>17</sup>For nothing is hid that shall not be made manifest, nor anything secret that shall not be known and come to light. <sup>18</sup>Take heed then how you hear; for to him who has will more be given, and from him who has not, even what he thinks that he has will be taken away.”

<sup>19</sup>Then his mother and his brethren\* came to him, but they could not reach him for the crowd. <sup>20</sup>And he was told, “Your mother and your brethren are standing outside, desiring to see you.” <sup>21</sup>But he said to them, “My mother and my brethren are those who hear the word of God and do it.”

Տիրամայրն Մարիամ ու Տեառնեղբայր՝ հուշուած Յիսուսի աղբականները՝ Յիսուսը տեսնելու կ'ելեն, Հարկաւ ժամանակէ մը ի վեր դայն տեսած չըլլալիսն համար: Գործին քնութիւնն ալ կը պահանջէ ըսել՝ թէ Յիսուս կախածնուստէ՛ զուրս էր, քաղաքին շրջակայ կողմերը ժողովուրդի հետ դրաղած, մինչ միւս կողմանէ Փորկեսեցիներու եւ Գալիլեներու ծանր հակա-աակութեանց եւ թշնամութեանց տաւրիայ էր դարձած: Վերադայնու տեսանք թէ Յիսուսի անդուլ անդառար ժողովուրդին հետ դրաղիլը, եւ նոյնիսկ հերա-հուրն ու հանդիսան մոտանալը՝ իրենները շիթութեան մէջ թողած էր, եւ բռնի կերպով Յիսուսը ժողովուրդէն զուրս հանելու ու տուն մտցնելու ու հանդիպեցնելու սրտման յանդեցան (Յ 72): Անկէ հաքն ալ Յիսուսի ընթացքը փոխուած չէր, նո շարունակ ժողովուրդին հետ էր. մէկ կողմէ կը բարե-բարէր, միւս կողմէ կը թշնամանուէր, դաւաճանութեան խօսքեր ալ կը պատէին. սովորական պայմանաժամերուն ալ տուն չէր դարձած. Մարիամի սիրտը անհանդիստ, Տեառնեղբայրներէն քանի մը հաաը ընկեր աննելով՝ քաղաքէն կ'ելլէ սրդին փնտռելու, յուր մը աննելու, աչքով տեսնելու, սիրտը հանդարտեցնելու: Որդեւէր մօր մը սովորական գործն է:

Ըստ Մատթէոսի՝ Յիսուս ընկ ժողովուրդսն խօսէր, ըստ Մարկոսի՝ ժողովուրդն շարք գնալաւ նստէր, եւ ըստ Դավթասու՝ եկողները ոչ կարէին հասանել ի նա վրան բազմութեանն: Ուրեմն երբ կը կարդանք թէ Յիսուսի մայրն ու Տեառնեղբայրները կան արսաւեայ, ոչ թէ տունէ կամ բնակութենէ մը զուրս պիտի հասնանք, այլ Յիսուսի շուրջը ժողովուրդին կողմած շք-շտանկէն դուրս, զոր չեն համարձակիր ճեղքել եւ ներս մտնելով Յիսուսի հասնիլ: Յիսուսը գտած ըլլալին յի բաւեր սիրտերնին հանգարտեցնելու, այլ Մարիամ կը փախաքի անդամ մըն ալ երեսը տեսնել, ստուգել թէ տխարացած ու հիւժած կերպարան մը չունի՞ր, թէ դո՞՛ւ է արդեօք, կամ թէ ի՞նչ բանի պէտք ունի: Չկարենալ իրենք սուաջ անցնիլ, ձայն կու տան դէպի ներս, եւ իրտրու սղղարարելով, վերջապէս Յիսուսի մօտ եզոզներէն մէկ մը յուր կու սայ սմար. «Մայրդ ու եղբայրներդ եկել են, մինչեւ քեզի մօտենալ չեն կրնար, հետուն կեցեր են, կը սպասեն, կ'ուզեն քեզ տեսնել»:

Յիսուս որ վարդապետելու եւ քարոզելու պատրաստ էր, չի հաճիր քա-րոյութիւնը ընդհատել եւ մօրը տեսութեան երթալ: Ոսուսն օրինակ մը՝ թէ տատուածային դարձելը անձնական դարձերէն պէտք է յաւաջ անցնին, պաշ-տօնականներ անհատականներու վրայ պէտք է նախադասութիւն սննեան: Ինչ որ դարձով կ'ընէ, մեկնութեամբ ալ կը շեշտէ. «Ի՞նչ մայր, ի՞նչ եղ-բայր» կ'ըսէ շուրջը եզոզներուն՝ զպայուն շեշտով մը, եւ ձեռքը տարածելով եւ մատնանիլ բնելով իր աշակերտներն ու իր հետեւողները. «Ահա՛, կ'ըսէ, իմ մայրս, ահա՛ իմ եղբայրներս. անանք որ Աստուծոյ խօսքը կը լսեն, Աս-տուծոյ խօսքը կը դարձադրեն, Աստուծոյ կամքը կը կատարեն, անոնք են իմ եղբայրս ալ, իմ քոյրս ալ, մինչեւ իսկ իմ մայրս ալ»: Յիսուսի խօսքերը

այնչտի յայտնի են՝ որ բացատրութիւն պէտք չէ: Յիսուսի եղբայր եւ քոյր եւ մայր ըլլալ, Աստուծոյ սիրոյն արժանի ըլլալ է, եւ Յիսուսի վիպութեամբ ոչ թէ ազգակցական կամ արտաքին յարաբերութիւններն են՝ որ այդ արժանաւորութիւնը կը կազմեն, այլ մի՛այն ու միայն կատարեալ օրինաւորութիւնը: Որովհետեւ աւետարանիչներ կ'ուզեն Յիսուսի այդ մեծ սկզբունքը յիշել, անոր համար անկատար կը թողուն մօրը դաշուն դատմութիւնը, եւ չեն յիշեր թէ տեօնուեցա՞ւ եւ ի՞նչ խօսեցան եւ ի՞նչպէս բաժնուեցան. դուք է միտտին իրենց տունը դարձան:

Յիսուսի խօսքերը առակաւոր ձեւով եւ ընդհանուր ռճով դրուցուած ըլլալուն, միտքէ խի տնցնելու բան չէ, թէ Յիսուս ուզած ըլլայ իր բուն մօրը տիկնորդիւ, եւ դայի նուազ սիրոյ արժանի սեպել՝ քան իր առաքեալներն ու իրեն հետեւողները: Իսկ Մարիամի հետ եկողներուն եւ Յիսուսի եղբայր կոչուածներուն մասին, ստոր է, թէ ասոնք նայնիքն Տեառնեղբայր կոչուածներն էին, կո՛ւմ չօրան ալ ի միտտին կամ թէ չօրսերէն մի քանի՛ն, որոնց վրայ խօսեցանք Երկոտասան առաքեալներուն ս'վ ըլլալը բացատրած ատեննիս (§ 58): Եւ ինչպէս այնտեղ յիշեցինք, սոյն այս դիպուածն ալ փաստ մըն է՝ թէ Տեառնեղբայրները Երկոտասանից թիւին մէջ չէին: Իսկ թէ Տեառնեղբայր ըլլալու կամ կոչուելու ազգակցական կապը ի՞նչ էր, այս անգամ ալ բացատրութեան չենք մտներ, վերապահելով դայի Աւետարանի ա՛յն հատուածին, ուր այս Տեառնեղբայրներ յանուանէ կը յիշուին (§ 89):

Շք. Սրբոց հրեշտակապետացն՝ Գաբրիէլի  
և Միքայէլի, և ամենայն երկնային զօ-  
րացն: ԾՆ 18.33--19.2: Յոր 38.4-7, Ես  
6.1-7: Եզ 1.1-20: Եբր 1.6-14, Մտ 18.10-  
14:

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏՆԵՐԸ

Հրեշտակ բար է թարգմանուի պատրաստուոր կամ դեպքան: Ար-  
զարեւ, Հրեշտակները սահմանուած են սպասարկելու հողներու փրկու-  
թեանը ախ ժարդոց, որոնք պիտի ժառանգեն երկնից արքայութիւնը:

Թէպէտ Աստուծոյ առջեւ ծառայակից ենք Հրեշտակներուն հետ, սա-  
կայն մեծ է տարբերութիւնը ժարդոց և անոնց միջեւ, ինչպէս՝ տէրին և  
ծառային, իշխանին և ստեղծիչին:

Նոյնպէս՝ ինչպէս սուրբերուն միջեւ կան աւելի շատտակաւորներ,  
որոնք աւելի չեքապանծ փառքով կը պատուարին Աստուծոյ և ժարդոց-  
մէ, նոյնպէս և Հրեշտակներու Դասերուն մէջ: Անոնցմէ ոմանք ծանօթ են  
մեզի իրենց անունով, և կը տօնախմբենք իրենց յեղատակը:

Գաբրիէլ, որ կը թարգմանուի այլ Աստուծոյ, երկնքի բոլոր զուար-  
թուններէն աւելի ծանօթ է ժարդկային զեղին: Ան յամախ պատրաստու-  
որութեամբ հանդէս կու գայ՝ հին թէ նոր կտակարանին մէջ, որպէս զոր-  
ծակալ կամ դեպքան երկնաւոր արքային, առանելպէս ժարդացեալ Աս-  
տուծոյ փրկագործութեան խորհուրդին մէջ:

Միքայէլ, որ կը թարգմանուի ո՞վ է որպէս Աստուծոյ, զոյգ կա-  
կարաններուն մէջ ցոյց արուած է որպէս երկնային զօրավար, և միան-  
գամայն վերակացու և պաշտպան Աստուծոյ եկեղեցւոյն: Դարերու ընթաց-  
քին անոր կատարած սքանչելիքները առիթ տուին անոր մեծ տօնախմբու-  
թեան, ի պատիւ Մ. Հրեշտակապետներուն և բոլոր երկնային զօրքերուն:

Երբ մեծն կոստանդիանոս իր դարձէն յետոյ թաղմաթիւ եկեղեցիներ  
լինել տուաւ. հռչակաւոր եղաւ նաեւ այն տանաբը՝ զոր կառուցեց Միքա-  
յէլ Հրեշտակապետի անունով: Ըստ աւանդութեան, բարեպաշտ կայսրը  
Մոսթենիսնի մէջ զատու արձան մը՝ որ կը ներկայացնէր արժիւի թեւերով  
այլ մը: Երբ հարցուց թէ որ՞նք արձանն էր ան, Միքայէլ Հրեշտակապե-  
տը անոր երեւցաւ և ըսաւ որ հոն տանար մը կանգնէ, որ հաւատացեալ-  
ներուն համար ուխտատեղի մը թող ըլլայ, և հոն երկնային թարգմանու-  
թիւն զտնեն իրենց հոգեւոր և ժարմաւոր կարիքներուն համար:

Յայտատուքները կը զրեն, թէ երբ առային անգամ պատարազ պի-  
տի մատուցուէր Մ. Միքայէլի անունով կառուցուած եկեղեցիին մէջ, պա-  
տանեակ մը, ի մէջ խուլ և համր, կանխելով քարկաւազը՝ ըսաւ թարգմա-  
նայն. Պատիսունէ ( = զգոյշ եղէք): Եւ ապա, Մ. հայրտպեալ ըսաւ. Ե  
արուքիւմ սրբոց:

Մ. Կոստանդիանոս ապա ուրիշ եկեղեցի մը շինեց՝ յանուն Գաբրիէլ  
և Միքայէլ Հրեշտակապետներուն, Նոյնպէս Պոլսոյ մէջ:

Արեւմտեաններուն ժամ կը պատմուի նոյնպէս՝ թէ հինգերորդ դա-  
րուն վերջը Իտալիոյ Ապուլիա դաւաւին մէջ Միքայէլ Հրեշտակապետը ե-  
րեւցաւ քարայրի մը մէջ, որ զարդանալով մատուտի վերածուեցաւ: Եւ  
այսպէս համայն արեւմուտքի մէջ տարածուեցաւ Մ. Հրեշտակապետներուն  
տօնախմբութիւնը:

Ներպէս Ենորհայի, իր եզրոր՝ Գրիգորիս Կաթողիկոսի խնդրանքով,  
100 տուն ռասմաւոր դրեց՝ նուիրուած պանծալի Հրեշտակներուն:

† Կիր. Թ. Կիւրակէ գկմի Ս. Խաչիմ: Ես  
24.1-13: Եփ 5.15-33: ՂԿ 8.49-57:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(8. 49-57)

LUKE 8

49 Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տու-  
նէն մէկը եկաւ. եւ իրեն ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս  
50 մի՛ յողնեցներ վարդապետը»: Յիսուս ասելիս լսելով,  
ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛  
տա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

51 Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ,  
չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յա-  
կոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն:  
52 Ներս գտնուողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային:  
Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ  
53 կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ զի-  
54 տէին որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս  
55 հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրածայն ըսաւ.  
56 «Ո՛վ փոքրիկ, ուքի՛ ել»: Անմիջապէս անոր հոգին վե-  
րադարձաւ եւ ուքի կանդնեցաւ: Ապա Յիսուս հրամա-  
57 յեց որ ուսելիք ասն աղջկան, մինչ ծնողքը ապշահար  
եղած էր: Յիսուս անոնց պատուիրեց որ պատահածին  
մասին ոեւէ մէկուն բան չըսեն:

49 While he was still speaking, a man from the ruler's house came and said, "Your daughter is dead; do not trouble the Teacher any more."  
50 But Jesus on hearing this answered him, "Do not fear; only believe, and she shall be well."  
51 And when he came to the house, he permitted no one to enter with him, except Peter and John and James, and the father and mother of the child.  
52 And all were weeping and bewailing her; but he said, "Do not weep; for she is not dead but sleeping."  
53 And they laughed at him, knowing that she was dead.  
54 But taking her by the hand he called, saying, "Child, arise."  
55 And her spirit returned, and she got up at once; and he directed that something should be given her to eat.  
56 And her parents were amazed; but he charged them to tell no one what had happened.



Աւետարաններուն մեղի հազարգում տեղեկութեան համեմատ Յիսուս երեք մեռելներ միայն աղջնուցած է:

Ասանցմէ մէկն է Նայիվի պատանին (Ղուկ. Է. 11-17) որ իր մօրը միակ դուստին էր:

Երկրորդը Յայրուսի աղջիկն է (Մատթ. Թ. 23-26: Մարկ. Ս. 35-43: Ղուկ. Ը. 49-56) որ ասաներից տարեկան հասակին մեռած էր:

Իսկ երրորդն է Բեթանիացի Ղազարոսը (Յովհ. ԺԱ. 17-44) որ չորս օր առաջ մեռած ու թաղուած էր՝ երբ Յիսուս այցելեց անոր գերեզմանը:

Ասանցմէ առաջին երկուքը երիտասարդ էին և ասկաւին չթաղուած աղջնցան, իսկ երրորդը չափահաս սարիքին մեռած էր և չորս օր գերեզմանին մէջ մնալէ յետոյ է որ ասացաւ իր երկրորդ կեանքը:



ՅԻՍՈՒՍ ԱՂՋԻԿԸ ԵՐԿՈՒՅԻՆԸ

ՅԱՅՐՈՍԻ ԱՂՋԿԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մատր. Թ. 23-26, Մարկ. Ե. 35-43, Ղուկ. Ը. 49-57

Տեսատես կնոջ բժշկութիւնը կատարուեցաւ հաստանաւմի ծովեղեր-  
քէն Յայրոսի տանը երթալու ճամբուն վրայ: Յիսուս պահ մըն ալ ճամբուն  
վրայ կանգ տաւ. բայց խեղճ Յայրոսի սիրտը կ'եփէր, Յիսուսի ուշանալը  
իրեն համար մահու եւ կենաց վայրկեան կ'երեւէր. մէկ հասիկ աղջիկը դրեթէ  
հողեվարք թողած էր ու ծովեղերք վաղած: Յիսուս հաճած էր դալ. պահ մը  
Յայրոսի սիրտը մխիթարութիւն որայցած էր, բայց ահա տեսաւեսին մի-  
շաղէպը նորէն Յայրոսի սիրտը վարանմանց կը մտունէր: Վերջապէս մի-  
շաղէպը փակուելով Յիսուս նորէն քաշելու սկսած էր, եւ ահա հեռուէն  
Յայրոսի տունի մարդերէն միջ կ'երևու հողի շտապով դէպ իրեն կու դած:  
Յայրոս կը յառաջէ, հետաքրքիր է, լուր կ'սողէ, բայց յանկարծ կը տխրի.  
«Աղջիկը մեռաւ, կ'ըսեն, պարտալ տեղ վարդապետը մի' յոյնեցիներ, բժշկու-  
թեան աստիճանացաւ»: Յիսուս անոնց խօսիլը տեսնելով, ինչ ըսելին կը  
հարցնէ; եւ անոնց տուած դոյժը կը լսէ. բայց ասոնց այլայլելու՝ Յայրոսի  
կը դառնայ ու կ'ըսէ. «Մի' շփոթից, մի' վհատից, հաւատքդ կատարեալ  
պահէ', աղջիկդ կ'ապրի»: Մատթէոս երկրորդ անգամ եկողները չյիշելուն,  
առաջին անգամէն աղջկան մեծիւր կը յիշէ:

Ճամբան կը յառաջեն, Յայրոսի տունը կը հասնին, որ արդէն մեռելի  
տուն դարձած է, կոծ ու արցունք սմեկնուն կողմէ, սրակիրներու բազմու-  
թիւն, ծանօթներու ամբոխ մը ժողովրդապետի պատուոյն, բարձրաթիւ լա-  
րականներ իրենց խառնածայն պատամ դաշուձով: Յիսուս հանդարտօրէն ներս  
կը մտնէ, ամենուն կը խրատէ լացն ու կոծը վաղրեցնել, յուսահատ սղբերը  
լսեցնել: «Աղջիկը մեռած է, այլ քուն է» կ'ըսէ Յիսուս համարեալ շեշտով.  
բայց անկեցիներ, ծանօթներ, լալակուններ, սրք աղջկան վերջին շունչ տալը  
տեսած էին, Յիսուսը սարսաղ խօսքեր ծախող մը կը կարծէին եւ ծաղրելու  
ձեւեր կ'ընէին:

Յխուսն անվրդով, Յայրոսն ու ինը կը քաջալերէ, եւ այս երկուքը եւ իր աշակերաններէն միայն երեքը, Պետրոսն ու Յակոբոսը եւ Յովհաննէսը, սրբ իրեն հետ տուն եկած էին, մէկտեղ առնելով՝ կը ծոնէ այն սենեակը, ուր մեռած աղջիկը դեանին վրայ տարածած էին, եւ այս հինգէն դատ ով սր կոր դուրս կը հանէ ու դուռը կը փակէ: Անկէ ետքը կը մտանայ աղջկան անշունչ մարմնոյն, անքէն կը բռնէ ու հրամայական շնչով՝ փչոյն: «Աղջիկս, ե՛րբ, եւ իսկոյն աղջիկը կը կանգնի: Ղուկաս կ'ըսէ. 'Դարձաւ ողի նորա, որով աղջիկին իրաւցնէ մեռած լինելը կը հաստատուի: Մարիոս ճիշդ ու ճիշդ Յիսուսի դարձած բառերը յառաջ կը բերէ, Տաղիթա կամի, ժամանակին Հրէից իօսած արամերէնով, եւ զայն կը թարգմանէ, Աղջիկ դաւ, քեզ անեմ, արի, որ՝ Ղուկասու մէջ թարգմանուած է: Արի՛, կա՛ց, մամուկ դաւ. իսկ Մատթէոս կը բաւականանանայ մի՛այն իրողութիւնը յիշել տօանց շատ մանրամասնութեանց, մինչ Մարիոս, Հակասակ իր համառօտարան ոճին, Յայրոսի աղջկան պատմութիւնը սմենէն երկար գրած է:

Անհնար է Յայրոսի եւ իր կնոջ ուրախութիւնը բացատրել, ինչպէս նաեւ նայն տան մէջ խոնուած բաղձութեան դարձացումը յայտնել, երբ սենեակին դուռը կը բացուի եւ մեռեալ կարծուած աղջիկը ողջ ստոյլ, դուարթ ու կայտաս, իւրօրի քալելով՝ մօրը հետ սենեակէն դուրս կու գայ՝ անոյշ քունէ արթնցած տղու մը պէս: Յիսուս վարձաւ ծնողացը ապաղլոց սր աղջկան քիչ մը կերակուր ասն, որով թէ՛ իրաւցնէ կենդանոցած եւ թէ՛ կատարեալ առողջացած ըլլալը պիտի հաստատուէր: Ինչչտի որ ալ Յիսուս յայտարարեց՝ թէ եղածը ճանճելու պէտք չկայ, եւ ասոր անոր պատմեին ու տարածելը աւելորդ է, այսուհանդերձ հնար չէր որ մեծադղորդ եղելութիւնը դողոնի մնար. որով Յայրոս մողովրդայեանին միամօր աղջկան վերակենդանութիւնը բոլոր Գալիլիայ մէջ խօսուեցաւ: Նայինի այլիին աղուն յաբութենէն ետքը այս երկրորդ յարութեան հրաշքն է, որ Աւետարաններէն կը պատմուի, եւ երեք աւետարանիչներն ալ իբր իսկական յարութեան հրաշք մը կը պատմեն զայն: Հեռեւարտը բոլորովին անսեպի եւ աւետարանական պատմութեանց անյարմար է կարծել, թէ պարզապէս տեքստի մաշուան պարագայ մըն էր Յայրոսի աղջկան դէպքը, որովհետք երբեմն կը պատմուին, եւ տեսնուած ալ են, մեռած կարծուելէ եւ թողուելէ ետքն ալ կենդանի պտնուիլ:



Շք. Սրբոց առաքելոցն՝ Անդրէի եւ Փիլիպպոսի: Իմաստ 9.13--10.2: Եր 16.16-19: Գրծ 8.26-40: ԹԿ 1.35-51:

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ո Յ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ԱՆԴՐԷՅ ԶՕՐԱՎԱՐ ԵՒ ԻՐ ԲԱՏԱԿԸ

Ասորիքի հոտմէական բանակին զօրազուխներէն մին էր Անտիոքոս սպարապետի ձեռքին տակ, Դիակ-դիաբանասի եւ Մաքսիմիանոսի օրով, դադանապէս ջրխտոնեայ: Բարբարոսներու դէմ պատերազմի զըրկըւած ժիջոցին, երբ իր 599 ղինուարները երկիւզ զդացին, ինք քաջալերեց զանոնք Քրիստոսի անուանով: Ամէնքը հաւատացին եւ յաղթեցին: Անտիոքոս այն ատեն թշնամացաւ անոնց դէմ, եւ Անդրէասը իր բանակով տարազրելէ վերջ, երկու հազար զօրքով հալածեց ամէնքը: Անդրէաս ասոնք ալ դարձուց ջրխտոնէութեան: Տարսոնէ անցած ատենին, ամէնքը մկրտուեցան սնդույն Պիտրոս եւ Բերիոյ Նունոս եպիսկոպոսներէն: Անտիոքոս զրեց Կիլիկիոյ Սելուկոս կուսակալին, որ մեծ զօրութեամբ յարձակեցաւ: Անդրէի բանակին վրայ: Անյաջող կսիւէ մը ետք, սպտեց մինչեւ որ անոնք խմբուեցան ձորամէջ կիրճի մը մէջ, ուր ամէնքը ի վերջոյ ընդունեցին Նահատակութեան պահկը:

2. Առաջաւորէն առաջ կամ վարդապառէն յետոյ: Յ. Օգոստոս 19:

ԵՒՔԻՆՆԷ ԿՈՅՍ, ԿՈՅՐԱՎՔԻՓՈՍ, ՄԱՅՐԱՎ՝ ԿՂՕԴԻԱ, ԵՂԱՅՐԱՅՔԻՐՔ՝ ՍԵՐՔԻՈՍ ԵՒ ԱՊԻՏՈՆ, ԵՒ ՊՐՈՍՏՈՍ ԵՒ ՅԱԿԻՆԹՈՍ ԳՆԵՔԻՆՔԻՆԵՐԸ

Եւզինէ, հոտմայեցի հեթանոս արնուատոճմ ընտանիքի մը աղջիկն էր, եւ կ'ապրէր հաւանաբար Բ. դարուն վերջերը, Կոմոտոս կայսեր օրով: Հայրը, Փիլիպպոս, պետական պաշտօնով Եզիպտոս մեկնեցաւ, իրեն հետ տանելով կինը, երեք պաւակինսը եւ ընտանեկան պարապաները: Աղեքսանդրիոյ մէջ պատեհութիւն ունեցան անոնք շփման մէջ ըլլալու ջրխտոնեաներու հետ: Եւզինէ կարգաց Ս. Գիրքը եւ սուրբերու վարքը, ու խորապէս աղուեցաւ Թեկղի վկայարանութենէն. ուխտեց հեռու մնալ ամուսնաւոր կեանքէ, եւ համոզւով իրենց տան երկու ներքինի ծառաներն ալ, զվճեց Հեղինոս եպիսկոպոսին, ու երեքն ալ մկրտուելով նըւերուեցան ճղնակրօն կեանքի: Եւզինէ փոխեց իր անունը Եւզինէոսի, եւ իրբեւ այր կրօնաւորեցաւ: Մեղսնաւ անուն կին մը, որ բժշկուած էր աղօթքով, սիրահարեցաւ անոր, ու երբ մերժուեցաւ անկէ, զրպարտական ամբաստանութիւններ ըրաւ անոր մասին: Աղեքսանդրիոյ դատաւորին առջեւ, որ էր նոյնինքն Փիլիպպոս, Եւզինէն հայրը: Կոյնը, երբ ներկայացաւ իր հօրը ատեանը, հարկաւոր նկատեց յայտնել իր ինքնութիւնը, եւ այնքան մեծ եղաւ իր աղեցուցութիւնը իր հօր վրայ, որ նա ընդունեց ջրխտոնէութիւնը, յանձն առնելով կորսնցնել իր պաշտօնն ու զիրքը. եւ այդ իսկ պատճառաւ մահուան դատապարտուեցաւ: Եւզինէ իր մօրը եւ եղբայրներուն եւ ներքինիներուն հետ Հոտմ դարձաւ, ուր ինքն ու ներքինիները բանտին մէջ նահատակուեցան, իսկ մայրն ու եղբայրները բարեպաշտ կեանքով ապրեցան:

2. Առաջաւորէն առաջ կամ վարդապառէն ետ: 11

† Կիր. Ժ. Կիրակէ զկնի Ս. Խաչին: Բարեկենդան Յիսնակաց պահոց: Եւ 25.9--26.7: Փլպ 1.1-11: ՂԿ 9.44-50:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(9.44-50)

LUKE 9

44 Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Լա՛ւ մտիկ րէ՛ք եւ մի՛ մոռնաք ստիկաւ մարդու Որդին սխալի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկընան: Միս կողմէ ալ կը վախնային իրեն հարցնելու այս մասին:


46 Աշակերտները սկսան վիճարանիլ թէ իրենցմէ մի՞ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանդնեցնելով ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունով՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս ընդունած է, ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է, ան է մեծը»:

49 Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ գեւեր կը հանէր եւ մենք արդիւնցի՛նք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէք չէ»: Յիսուս ըսաւ. «Արդեւք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ան որ հակառակ չէ ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է»:

But while they were all marveling at everything he did, he said to his disciples, "Let these words sink into your ears; for the Son of man is to be delivered into the hands of men." "But they did not understand this saying, and it was concealed from them, that they should not perceive it; and they were afraid to ask him about this saying.

46 And an argument arose among them as to which of them was the greatest. "But when Jesus perceived the thought of their hearts, he took a child and put him by his side, and said to them, "Whoever receives this child in my name receives me, and whoever receives me receives him who sent me; for he who is least among you all is the one who is great."

49 John answered, "Master, we saw a man casting out demons in your name, and we forbade him, because he does not follow with us." "But Jesus said to him, "Do not forbid him; for he that is not against you is for you."



ԱՆԳԱՄ ԻՐՆ ԱԼ ԿԱՓԱՌՆԱՌԻՄ

Մատթ. Ժ. 21-22, Մարկ. Թ. 29-31, Լուկ. Թ. 44-45

Թարթրի ստորտուր կատարուած լուսնոտ դիւանարին բժշկութիւնը մեծ արձագանդ հանեց ամէն կողմ, Գալիլիոյ մէջ լուսեցաւ, աստն անցնելով սր-  
գութիւնն ալ մերմացած էր: Յիսուս որչից նորէն Կափառնաում դտանայ,  
իր քարոզութեանց եւ հրաշարժութեանց կեդրոնը, ուր քանի մը ամիսներէ  
ի վեր ոտք կտխած չէր: Թարթրի կողմերէն միջիւ կափառնաում երթալու  
համար Գալիլիոյ մէջուրէն պիտի անցնէր, սակայն որչափ հնար էր՝ առանց  
աղմուկի եւ առանց ծանձելու, լաւազոյն սեղելով միշտ, որ գործը ինք-  
նիրեն խօսի, եւ ոչ թէ խօսքն ու ձայնը, որք երբեք օչտտակար չեն, եւ յաճախ  
միտասակար ալ են: Այդ մտադրութիւնը յայտնի կը լինէ Մարիոս. Ոչ կամէր  
եթէ ոք դիտուցէ, եւ հետեւարար ուղիղ դիժը բռնած պիտի ըլլայ, ցամաքի  
ճամբան, դէպի Մտադրողա եւ Գեննեսարէթ, որ է Կափառնաում տանող մեծ  
պողոտան:

Ճամբուն խօսակցութիւնները հարկաւ վերջին դիպուածոց շուրջը պի-  
տի գտնուային: Յիսուս յատուկ մտադրութիւն գործուցած էր իրեններուն  
սիրան ու միտքը պատրաստել իր մերձաւոր մահուան վրայ, նախատեսելով  
որ յանկարծ կրնային շփոթիլ. ուստի շարչարանաց եւ մահուան նախաբու-  
շակութեան վրայ կ'աւելցնէր երբորք օրը յարութիւն ատնելու աւետիսը: Ա-  
շակերաները կը լսէին, Յիսուսը կորսնցնելուն վրայ կը տփրէին, իսկ յու-  
րութիւն ատնելու կէտին վրայ յատուկ պաշտօնար մը չէին կրնար կապել.  
Յիսուսի հարցները ալ կը քաշուէին, որովհետեւ յարութիւն ատնելուն վրայ  
հետաքրքրուիլը՝ մահուան վրայ անտարբեր գտնուելու իմաստը կրնար սու-  
նել:

Միս կողմէն Յիսուսի մահուան վրայ տեղբարգտանալով՝ կը սկսէին  
մտածել, թէ իրենց վախճանը ի՞նչ պիտի ըլլայ, կամ թէ սխառած դարձը պի-  
տի կարենա՞ն շարունակել: Հարկաւ այդ վերջին դադարաբը իրենց միտքին  
մէջ տեղի գտած ըլլալու է, որ գործը շարունակելու համար մէջերնէն մէկուն  
մեծ ճանչցուելուն պէտքը կը գրային, եւ այդ պատճառով ծանր վէճի կը  
բռնուէին իրարու հետ, որչիլու համար թէ, Ո՞ր արդեօք մեծ իցէ ի Ացցամէ,  
որովհետեւ ամէն մէկն ալ մեծ ըլլալու հետամուտ էր: Այդ վիճարանութիւ-  
նը ինքն ըստ ինքեան կը հաստատէ թէ ստաքեաներուն մէջ մեծ նշանակ-  
ուած կամ մեծ ճանչցուած մէկը չկար, եւ թէ հետեւարար՝ Յիսուսի կողմէ  
չերթննի մօտերը Պետրոսի խօսուած երանութիւնը, ո՛չ Յիսուսի մտադրու-  
թեան մէջ, եւ ոչ առաքելոց հատկացուցութեան մէջ Պետրոսի առաւելութիւն  
կամ գլխաւորութիւն տալու իմաստ ունեցած չէր, ինչպէս որ մենք ալ բու-  
ցատրեցինք (§ 113):

Պետրոսի Երկրբամեանի հրամանը տալէն ետք, Յիսուս այն օր մէջտեղ չեկաւ, այլ կտախտնաւորի մէջ ալ՝ առանձին մնալու կերպը շարունակեց։ Պետրոս հարկաւ հրամանը կատարեց եւ անմիջապէս դարձաւ, եւ Յիսուս որիչ խօսակցութեանց կարգին, սկսաւ առաքեալներուն հարցնել. «Ճաստուն վրայ իրարու հետ վէճի բռնուած էիք, խնդիրը ի՞նչ էր»։ Առաքեալները լսեցին, յայտնելէ քաշուեցան՝ մէջերնին մեծ ո՞վ պիտի ըլլայ փնտռելը, մարդ մը չմեռած ժառանգութիւն բաշխելու չափ տղեղ բան մը ըլլալը՝ իրենք ալ կը հասկնային։ Յիսուս վէճին նիւթը քրկացող չէր, բայց կ'ուզէր որ իրենք խտտովանին. ուստի հարցումը կրկնեց, եւ առաքեալներն ալ տեսնելով որ փախուստ տալու ճար չկայ, համարձակութիւն առին ըսելու. «Քանի որ մեզ պիտի թողուս, չենք ուզեր Երկնից Արքայութեան գործէն ձեռնթափ ըլլալ, որչ կը փախաքինք դայն շարունակել, ուստի կ'ուսելինք գիտնալ, թէ մէջերնէս ո՞վ պիտի ըլլայ մեծն ու գործին ղրուելը»։ Եթէ երբեք Յիսուս առաքեալներուն մէջ մեծ մը որոշել ուզած ըլլար, կամ թէ որոշել ստէր, ասկէ լաւ պարտոյ մը չէր կրնար ըլլալ ըսելու, թէ արդէն Պետրոսը ձեզի մեծ կարգեցի, կամ թէ Յակոբոս մեծ պիտի ըլլայ։ Ընդհակառակն Յիսուս բացէրայ կը մերժէ, իրմէ ետքը իրեն տեղ մեծ մը դնելու պազախարը։ «Ձեր մէջը, կ'ըէ, մեծութեան եւ առաջնութեան, իշխանութեան ու սրտաւոյ հանդամանքնէր մի՛ փնտռէք. ձեր առաջնութիւնը խոնարհութեան եւ ուրիշներու սպասկար ըլլալուն մէջ է. առաջինը նա՛ է, որ ամենէն սրտովն է, բայց ամենուն ծառայութեան կը հասնի. միամիտ հեղուքիւնն ու խոնարհ կրտսերութիւնն է իմ ուզած մեծութիւնս»։ Եւ նայն տեղ սրտով աղայ մը տեսնելով, պաքն իրեն կանչեց, սիրեց, ու գերիւր առնելով շարունակեց. «Ահա՛ իմ սիրած մեծութիւնս, անմեղ եւ միամիտ պարզութիւն. թէ որ դուք ալ սրտով տղա մը պէս անմեղ եւ միամիտ ըլլաք, Երկնից Արքայութեան մէջ մեծ կ'ըլլաք. որովհետեւ ով որ իջ սիրտը այս աղուն պէս հեղ ու խոնարհ կրնայ ընել, նա է Երկնից Արքայութեան կամ Աւետարանի գործին մէջ մեծ եղողը։ Այլ Իշխանութիւնը, այլ առաքիներութիւնն է Աւետարանի մեծութիւնը։ Աւետարանի գործին մէջ իմ տեղս բռնողը առաքիներն է, եւ ով որ՝ այնպիսին կ'ընդունի, զիս կ'ընդունի՝ որ Աւետարանին հիմնադիրն եմ, եւ ով որ զիս կ'ընդունի, Երկնաւոր Հայրը ընդունած կ'ըլլայ, որ Աւետարանին հրամայողը եւ զիս առաքողն է։ Հետեւապէս ի դուք կը փնտռէք՝ թէ իմ տեղս մեծ ո՞վ պիտի ըլլայ. ես մեծ մը նշանակելիք չունիմ. ամենէն սրտովն ալ մեծ է իմ աչքիս, եթէ նա առաքիներութեամբ մեծ ըլլայ»։

Որչափ ալ Յիսուսի խօսքերուն մէջ պարզապէս բարոյական խրատներ կան, սակայն Յիսուսի յաջորդող մէկ մը չգտնուելը շեշտուած է, եւ այլեւս առաքեալներուն մէջէն մեծ ու սրտովի դասել ներեալ չէ, ամէնքն իրարու հաւատար յուցուած են։ Իսկ այն աղուն հատար՝ զոր Յիսուս գերիւր առաւ, աւանդութիւն մը կայ, թէ նա երբ մեծցաւ՝ առաքեալներուն հետեւեցաւ, եւ ի վերջոյ Անտիոքի եպիսկոպոս եղաւ, որ Ս. Իգնատիոս Աստուածադպեաց ասունա՛յ ճանչցուած է։

Շք. Սրբոցն՝ Գրիգորի Սփանջեղագործին,  
Նիկողայոսի հայրապետին եւ Միւռոնայ  
եպիսկոպոսին: Իմատ 10.9-12: Մղ 2.5-7:  
Ա. Պտ 5.1-7: ՅՀ 10.11-16:

Ս Ե Ր Ա Ս Տ Ի Ո Յ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ԳՐԻԳՈՐ ՆԵՈԿԵՍԱՐԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Մականուանեալն՝ Սփանջեղագործ: Մեծահռչակ  
սուրբ մը, յոյժ յարգուած թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւ-  
մուտքի մէջ: Մնած է Պոնտոսի կամ Գամբաց Նէոկե-  
ասրիա քաղաքին մէջ. գաւակ էր հեթանոս ծնողքի,  
բայց շուտով կրթուեցաւ քրիստոնէական աստուած-  
պաշտութեան մէջ՝ շնորհիւ Փերմիլիանոս արքեպիս-  
կոպոսին Կեսարիոյ. ասին մը աշակերտած էր Ուոպի-  
նէսի ա՛լ: Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 240ին: Այդ օրը  
հաղիւ 17 քրիստոնէաներ կային իր վիճակին մէջ. իր  
ջանքերուն շնորհիւ այնքան շուտով աճեցաւ Աւետա-  
րանի կրօնքը հոն, որ մեռած օրը 17 հեթանոսներ մի-  
այն մնացեր էին Նէոկեսարիոյ մէջ: Սփանջեղագործ  
կոչուած է բազմաթիւ եւ բազմապիսի հրաշքներուն  
համար, դորս կատարելու աստուածային շնորհն ունե-  
ցաւ: Գրած է նոյնպէս ճառեր, որոնցմէ ոսկեղարեան  
թարգմանութեամբ հայերէնի փոխադրուած են. «Ի  
ծնունդն Քրիստոսի», «Յաւեախ Աստուածածնի»,  
«Ներբողեան ի Ս. Ստեփանոս», «Երկրաստան դուխք  
նպովից» եւ այլն: Մասնակցած է Անտիոքի տեղական  
Ժողովին՝ ընդդէմ Պօղոս Սամատացւոյն: Երեսուն  
տարիներու եպիսկոպոսական գործունէութենէ վերջ  
մեռած է 270ին, իր վիճակին մէջ:

† Կիր. Ա. Կիրակի Յիսնակաց: Եւ 36.1-9:  
Ա. Թւ 1.1-10: ՂԿ 12.13-31:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(12.18-31)

LUKE

13 One of the multitude said to him, "Teacher, bid my brother divide the inheritance with me." 14 But he said to him, "Man, who made me a judge or divider over you?" 15 And he said to them, "Take heed, and beware of all covetousness; for a man's life does not consist in the abundance of his possessions." 16 And he told them a parable, saying, "The land of a rich man brought forth plentifully; 17 and he thought to himself, 'What shall I do, for I have nowhere to store my crops?'" 18 And he said, 'I will do this; I will pull down my barns, and build larger ones; and there I will store all my grain and my goods.' 19 And I will say to my soul, 'Soul, you have ample goods laid up for many years; take your ease, eat, drink, be merry.' 20 But God said to him, 'Fool! This night your soul is required of you; and the things you have prepared, whose will they be?' 21 So is he who lays up treasure for himself, and is not rich toward God." 22 And he said to his disciples, "Therefore I tell you, do not be anxious about your life, what you shall eat, nor about your body, what you shall put on. 23 For life is more than food, and the body more than clothing. 24 Consider the ravens: they neither sow nor reap, they have neither storehouse nor barn, and yet God feeds them. Of how much more value are you than the birds! 25 And which of you by being anxious can add a cubit to his span of life?" 26 If then you are not able to do as small a thing as that, why are you anxious about the rest? 27 Consider the lilies, how they grow; they neither toil nor spin; yet I tell you, even Solomon in all his glory was not arrayed like one of these. 28 But if God so clothes the grass which is alive in the field today and tomorrow is thrown into the oven, how much more will he clothe you, O men of little faith! 29 And do not seek what you are to eat and what you are to drink, nor be of anxious mind. 30 For all the nations of the world seek these things; and your Father knows that you need them. 31 Instead, seek his kingdom, and these things shall be yours as well.

13 Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ. «Վարդապետ, ըսէ եղբորս որ մեր հօր ձեռք ժառանգէն իմ  
14 բաժինս տայ ինձի»: Յիսուս պատասխանեց, «Ո՛ր մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար  
15 կարգեց մեր վրայ»: Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք աղաւաթեան բոլոր անասններէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ է իր ամբարած հարստութենէն»:  
16 Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ.  
17 «Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. "Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձըս ամբարեցու համար շտեմարաններուն մէջ տեղ չմնաց: Այո՛ւ, գիտեմ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակեմ պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ջորքնս եւ ամբողջ բերքեմս: Ապա ես ինձի պիտի ընեմ. — Ո՛ր մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանդի՛ստ ըրէ՛ կե՛ր, խնէ՛ եւ ուրախացի՛ր": Բայց Աստուած ըսաւ իրեն. "Անտէ՛ս մարդ, այս դէպեր իսկ հոգիք քեզմէ պիտի անեն. որո՞ւն պիտի մտայ պատրաստածդ"»: Եւ Յիսուս եզրակացուց. «Նայն է պարսպան բայր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ ուղբին հարստանալու»:  
22 Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Մի՛ մըտահոգուիք ձեր սպառնալիս համար թէ ի՞նչ պիտի ուտէք, եւ ո՛րչ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՞նչ պիտի հագնիք: Արտիճեալեւ կեանքը աւելի կարեւոր է քան ուտելիքը, եւ մարմինը աւելի կարեւոր՝ քան հագուստը: Իրտեցէ՛ք ագուսնները, որոնք ո՛րչ կը սերմանեն, ո՛րչ կը հնձնեն, ո՛րչ շտեմարաններ ունին եւ ո՛րչ ամբարներ, սակայն Աստուած կը կերակրէ դանձաւ: Աստուած պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ Աստուծոյ աչքին թըրուսններէն դերասանը էք: Մտահոգուիլը սուէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞, եթէ՛ նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք: Իրտեցէ՛ք եւ տեսէք թէ ի՞նչպէս կ'անի դաշտի շուշանը: Ո՛րչ կը հիւսէ եւ ո՛րչ ալ հազուստ կը կարէ՛ Հաստացէ՛ք որ նոյնիսկ Մոզոմոն իր ամբողջ փառքին մէջ անանցմէ՛ մէկուն պէս զեղեցիկ չկրցաւ հաղծիլ: Եթէ՛ Աստուած այդպէս ազատը կը հաղցնէ խօսք որ այսօր դաշտին մէջ է եւ վաղը կրակը պիտի նետուի, ձեզ աւելի լաւ պիտի չհաղցնէ՞, թերահաստաններս Հետեւարար, մի՛ մտահոգուիք ո՛րչ ձեր ուտելիքով եւ ո՛րչ ալ ձեր խմելիքով: Մի՛ մտահոգուիք դուք ձեզ, որովհետեւ ասոնք բոլորը չեթանոսներուն շատուկ են: Զեր Հայրը զիս որ այս բայրին պէտք ունիք: Այո, ազեղե՛ք որ Աստուծոյ արքայութիւնը դայ, եւ Աստուած ոչ ոք բայրը աւելիով պիտի տայ ձեզի»:

(ՂԿ. ԺԲ. 16-21)

առակով կը սարկինք թէ մարդու մը կեանքը իր ստացուածքին տասելութենէն կախուած է: Այն որ իր յայր հարստութեան վրայ կը գնէ յաւախարար կ'ըլլայ:

Միջադէպ մը եւս՝ որ Յիսուսի առիթ կ'ընծայէ աշխարհի բարիքներուն վրայ խօսել: Օր մը Յիսուս քարոզելու մտայ էր, երբ յանկարծ ժողովուրդին մէջէն ձայն մը լսուեցաւ — «Վարդապետ, հայրերնիս մեռաւ, պէտք է եղբորս հետ ստացուածքի ժառանգութիւննիս բաժնենք. բայց եղբայրս զիս կը զրկէ, բոլոր ինչքը դրուել կ'ուզէ. զուս որ խեղճեցուն օգնելու պատրաստ ես, ինձի՛ ալ օգնէ, եղբայրս համոզէ՛, որ արդարութեամբ իմ բաժինս սայ՛: Յիսուս, որ ամէն խեղճեցուն օգնութիւն չէր զպահած՝ երբ իրեն կը զիմէին, այդ բողոքողը մերժեց՝ երկու զլիսուար պատճառներով: Նախ որ լոկ բարերարութեան դարձ մը չէր առաջարկուածը, այլ օրինական եւ դատական դարձ մը. պէտք էր միւս եղբայրն ալ լսել, թէ ի՞նչ պատճառով կը զլանար եղբոր բաժինը, համ թէ իրօք բողոքողը զրկեա՞լ մըն էր, թէ ոչ այս կերպով խաղ մը դարձնելու միտք ունէր: Հետեւաբար Յիսուս պատասխանեց. «Ե՞րբ լսեցիր որ այս երկրին մէջ դատաւորի պաշտօն ստանձնէր եմ, որ ինձի բողոք կ'ընես, համ թէ երբէն ե՞րբ ես ժառանգութիւններ բաժնելու եւ իրաւարարի դարձ եմ բացած, որ ինձի կը զիմես»:

Երկրորդ պատճառը բարոյական էր. Յիսուս շարունակ այս աշխարհի բարիքը անարդէր, ինչքէ՛ ու ստացուածքէ՛ հրաժարելու, մի՛այն բարոյական եւ հոգեւորական բարիքները փնտռելու քարոզութիւնն էր խօսած, եւ բնաւ իրեն չէր յարմարել երկու եղբայրներուն նիւթական շահովը դրողիլ, մէկին համ միւսին աւելի տանելուն օգնութիւն ընել, որ է բնիկ սղատութեան պրացումներ եւ միտումներ քաջաշերել: Ահա այդ է Յիսուսի ըսածը. «Ամէնքե՛րդ ալ զլոյճ կղէք պրամ ու հարստութիւն ձեռք ձգելու ալու՛ միտումէ, որովհետեւ մարդուն նշմարիս կեանքը եւ հողւոյն օգուտը շատ ինչքեր սննդալէն չեն»:

ԱՆՄՈՒՑ ՄԵՆԱՏՈՒՆԻՆ ԱՌԱԿԸ

Ժառանգութեան համար բողոքողին միջադէպը առիթ կ'ընծայէ Յիսուսի իւր սիրամ մի նիւթը ընդարձակել, որ է աշխարհային նիւթական ստացութեանց անարդութիւնը, որուն վրայ այնչափ զեղեցիկ կերպով խօսած էր զլիսուարապէս Լեբան Բարսղին մէջ (Յ ԳՅ): Այստեղ ստեղծի Ղազարոսի մըն ալ կը յիշէ, որ սերիչ տեղ դրուած չէ: Հարուստ աղարակաւոր մը շատ բնադարձակ հողեր ունէր, եւ երբ որ տարի մը իւր հողերը արտասովոր ոտատուութեամբ բերք առին, այնպէս որ իւր սովորական ստրկներու համեմատաւ ունեցած շտեմարանները սխալի չբուռէին սարսափ լեբքը պարսւնակել: Երբ որ այս ու ոյն՝ ի՞նչ ճար մտածելը եւ ի՞նչ ընելիքը կ'ուզէին խմանալ, «Նս ընելիքս գիտեմ, ըսաւ. չէ՞ որ շտեմարանները պրակի կուզան, պրակիները կը քակեմ, մեծերը կը շինեմ, բայց տարեկան արգիւնքս մէջը կը լեցնեմ, այլեւս մտածելու եւ հոգալու պէտք չեմ ունենար: Ո՛հ, կ'ըսեմ ես ինձի. երջանի՛կ մարդ, այլեւս աշխատելու ալ պէտք չունիս, մինչեւ կեանքիդ վերջը վայելելու չափ ցորեն ալ տնիս, ուրիշ վայելելի պէտք եղածներն ալ ունիս, հանգիստ նստէ՛, կե՛ր, խմէ՛, պատկէ՛, դուարձացի՛ր, եւ ուրախ դուարթ կեանքդ վայելէ՛»: Յիսուս կը յաւելու. «Աստուած լսեց այս մեծատունին խօսքերը, եւ վրան ծիծաղեցաւ, զիշերով իրեն երևցաւ ու ըսաւ. «Անձի՛ս մարդ, բոլոր կեանքիդ համար քեզի հանդիստ ու վայելք կը խոստանաս, բայց կրնա՞ս արդեօք քեզի կեանք ալ խոստանալ. երբ այս գիշեր հողիդ առնեմ ու մեռնիս, համբարած բարիքներդ միթէ՛ քեզի օգտակար կ'ըլլա՞ն»»: Յիսուս վրայ կը բերէ ստակին բարոյականը ու կը յատելու. «Ահա այսպէս անձիս է ամէն մարդ, որ իւր երջանկութիւնը պանծնու եւ ինչքերու եւ վայելքներու վրայ կը զնէ, եւ դանց կ'ընէ իրեն համար երկնուսր պանծի եւ հոգեւորական հարստութիւններ եւ վայելքներ պատրաստել: Առակը պարզ է, սակայն բացարարութիւն չի պահանջեր, մենք ալ աւելի երկարել հարկ չենք տեսներ:

Ղաւկաս Յիսուսի բերնէն բուսական բնոյարձակ բացատրութիւններ կու տայ, նարատկ սննհնարով արտաքին բարութեանց, ինչքերու եւ պէտքերու մասին աւետարանական վարդապետութիւնը ամփոփել, ինչ որ Ստաթիկոսի Աւետարանին հետեւողութեամբ բուսական բնոյարձակ կերպով արդէն բացատրեցինք Լեւոն Քարապին մէջ (§ 63)։ Հետեւորար այտուղ բուսական ըլլայ յոյժ հակիրճ կերպով ղշխատար կէտերը յիշել։ Այդի եւ մարմնայ պէտքերուն համար հոգ շընել, այսինքն կերակուրի եւ հալուստի հոգերու վրայ սիրտ շհատցնել. սգին՝ այսինքն կեանքը, եւ մարմինը՝ այսինքն ապրիլը, կերակուրէն եւ հալուստէն աւելի յարգի տրտի սեղաւին։ Աստուած որ ապաւաններուն ալ հոգ կը տանի, եւ անոնք աւանց սերմաներու եւ աւանց հնձերու եւ աւանց համբարելու պէտքերին կը պտնեն նարախնամութեան շնորհիւ, հարկաւ աւելի հոգ պտտի տանի մարդիկներուն, որ այդ թուշաններէն աւելի յարգ սնին։ Մարդ իւր հոգածութեամբ իւր հասակին վրայ կանդուն մը շի կրնար աւելցնել. ի՞նչ յանդիտութեամբ կը կարծէ որ ինչքերն կարող պտտի ըլլայ աւելի մեծ արդիւնքներ ձեռք բերել։ Շուշան ծաղիկն ալ իրեն համար հոգ ունեցող չէ, բայց Սողոմանի՝ բարբ իւր հարտութեամբ ու կարողութեամբ՝ իրեն համար պարտաւորած դարգերէն աւելի դարգարուն է։ Վերջէն վերջ՝ շուշանի ծաղիկն ալ խոտ մըն է, այսոյ թարմ, վաղը շոր, միւս օր կրակի նիւթ, մինչ մարդը պերպանց արարած մըն է՝ բանական եւ անմահ հոգաւով օժտուած։ Աւտտի քանի որ Աստուած կայ, որ ամէն բան կը նարխանամէ, հեթանոսական թերահաւատութիւն է, ամէն ներքին հոգ մտնարով ուսակիքի եւ խմելիքի եւ հարնիքի ետեւէն ըլլալ։ Իրը եղբարկացութիւն եւ խօսքին կինք՝ Յիսուս կը համայն աւանքն եւ պշխուար մտաղբութիւնը նրկինց Արքայութեանը ձեռք ձգերու դարձնել, վտան ըլլարով թէ՛ միացեալը առաւածային նարխանամութիւնը դարհաս շընէր։ Այդ խօսքերը ի՞նչ շարիով եւ ի՞նչ խմատով հասկնարլիս արդէն իւր սելը բացատրած ենք (§ 63)։

Այդ սկզբունքները դնելէն ետքը Յիսուս կը դաւանայ իրեն հետեւող պղարիկ բաղմութեան, սկզբնական եկեղեցւոյ վարքիկ հօտին, եւ կը քաշարի, որ բնաւ վախ չունենայ իւր արտաքին բարութիւններէ վարի վնդրան համար, վասն ղի բարութեանց ղշխատար, այսինքն նրկինց Արքայութիւնը եւ Աւետարանը՝ նրկնաւոր Հայրը տուած է վարքիկ հօտին։ Այլեւս իրենք ապահարուած դանձ ունին նրկինց Արքայութեան մէջ, պէտք է որ այտուղ ունեցածնին վտանտեն ու ողորմութիւն բաշիեն, որովհետեւ ով որ իւր ունեցածը ողորմութեան կը դարձածէ՝ տուածը Աստուծոյ դանձին մէջ պահած կ'ըլլայ։ Այս աշխարհի դանձերուն դողեր կը սպանան եւ շտեմարաններուն ցեցեր կը վնասեն, խոկ երկինքի մէջ Աստուծոյ դանձին ո՛չ գող կը մօտենայ եւ ոչ ցեց կ'ապականէ, սիրտը ալ կ'ըլլայ հանդարտ եւ սպահարով։ Մարդ միշտ իր սիրտով իր դանձին կապուած է, դանձը կը մտածէ, դանձը կը հոգայ, դանձին վտանդներէն կը վարնայ։ Նրկիկ դանձին կապուած սիրտը միշտ պրատուողի մէջ է, երկինքի դանձին կապուած սիրտը վարի եւ կատարի սպաս կը մնայ, եւ երջանկութիւն կը վայելէ։

Այդ հատուածին մէջ արտաքին պտտայից յետադատութիւնը կը կապուի ողորմութեան հետ, որով այդ աւելարդ բուսած բարիքներէն բաղուելիք ներքին եւ շըմարիս օրուար մտանանիչ կ'ըլլայ, եւ մեր արտաքին կեանքի ընթացքն եւ բարիքներու կիրառութեան վրայ ուղիղ ճամբան ցոյց կը տրուի։



† ՇԲ. Արքայ առաքելոցն եւ առաջին յուսաորչացն մերոց Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Իմաստ 9.13--10.2: Եր 16.16-19: Ա. Կր 12.26--13.10: Մտ 9.35--10.7:

Ս. ԹԱՂԵՍ ԱՌԱՔԵԱԼ



Ս. Թաղէս Թաղապարհապետը (Վերջին Պատկերը) (Գրեթեմ Կաթիլ)

Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՆՍ ԱՌԱՔԵԱԼ



Ս. Քոթիմոս (Թիմոս) Բարթողիմէոսի (Կրեթեմ Կաթիլ)

**ՆՆՔՆՈՒԹԻՒՆԸ**  
Յիսուսի 12 առաքելներէն:  
Կը կարծուի որ անունը-Բարթողիմէոս- աւելի ընտանեկան անունն է, կամ մականունն էր, որ կը նշանակէ Որդի Յովնայի "The son of Tolmai": Արդէն, Բարթողիմէոսի կը տրուի նաեւ նարամայել անունը, որ կը նշանակէ Աստուծոյ Աուեր:

Մենքեան թուականը՝ անյայտ: Մնած է Կանա քաղաքին մէջ, ի Գալիլիա:  
Բարթողիմէոսի ոտքեայ ընտանեկանն եւ Յիսուսի հետ առաջին հանդիպումին որմանագրութիւնները Յովհաննու աւետարանին մէջ, իր անձին, նկարագրի անկեղծութեան մասին կուտան լրիւ գաղափար, ինչ որ կը նուիրազարծուի Յիսուսի կողմէ անեղբայ, վճառկան հաստատումով մը:

Ան թէ ինչպիսին է հայոց Առաջին Լուսաորիչը:  
... — Փրիկպոս գտաւ նախնայէլը եւ ըսաւ անոր. «Գտանք Յիսուսը, Յովսէփի որդին, նազարէթէն, որուն մասին գրած է Մովսէս՝ Օրէնքին մէջ, ինչպէս նաեւ՝ մարգարէները»: Նախանայէլ պատասխանեց. «Կարելի՞ քան է որ նազարէթէն բարի բան մը ելլէ»: Փրիկպոս ըսաւ. «Եկուք եւ տես: Յիսուս երբ տեսաւ նախանայէլը, որ իրեն կուգար՝ ըսաւ անոր մասին. «Ահա նշմարիտ Իսրայէլացի մը, որուն մէջ Ոննդութիւն չկայ»: (Յովհ. Ա. 46-48):

Բարթողիմէոս քրիստոնէութիւնը ցորոզած է Հնդկաստանի, Պարսկաստանի, Արարիոյ եւ Հայաստանի մէջ, ուր ի վերջոյ նահատակուած է գլխիվայր խաչելութեամբ:  
Նահատակութիւնը հաւանարար տեղի ունեցած է 66 թուին:  
Հայ հատուցեալներ այդ վայրը կը նուիրազարծեն՝ հետազային ղերիզմանին վրայ հաստատելով Ս. Բարթողիմէոսի վանքը:  
Այսուհանդերձ, հակառակ Առաքելի կեանքին, վկայարանութեան եւ վերոյիշեալ աւանդին, արեւմտեան կրօնական մայրաքաղաք Բարթողիմէոս առաքելի նահատակութենէն ետք, անոր մարմինը «հրաշքով մը» փոխադրուած կը նկատեն Իտալիոյ Պենեփէն-իտ քաղաքը, որ համարուն նահանգին կեդրոնն է...:

Յիսուսի 12 աշակերտներէն:  
Կոչուած է նաեւ Ղերէս, Յուդա, Թաղէս, կամ՝ Յուդա Յակոբեան (ս'չ Յուդա Իսկարիօտացի մասնիչը):  
Կը նկատուի Յովնաս Առաքելին եղբայրը:  
Մենքեան թուականը՝ անյայտ: Հաւանարար՝ Գալիլիացի: Նահատակուած է սրբազան առաքելութեան մէջ, շուրջ 46-ին:  
Իր անունն յիշատակութեան կը հանդիպինք Աւետարաններու հետեւեայ հատուաներուն մէջ:

Մատթ. Ժ. 2-4,  
Մարկ. Դ. 18-19,  
Լուկ. Զ. 14-16, ուր կ'անուանուի Յուդա Յակոբեան,  
Գործք. Ա. 13, ուր կը հշուտի որ ան՝ Յակոբոսի որդին էր:  
Թաղէոս Առաքել, Յիսուսի համբարձումէն ետք, իր սրբազան քարոզչութիւնը սկսած է Ողծսոսայէն, ուրիշ անցած է Հայաստան: Յաջողած է թափանցել մինչեւ հայոց արքունի պալատը, հաւանարար դիրքացնելու համար կրօնի տարածումը ժողովրդային զանդուաններուն մէջ:

Քրիստոնեայ կը մկրտէ Սանդուխտ կոյսը, որ Սանատրուկ իշխանին ազնիւն էր:  
Անանարուկ, քաղմերու եւ պալատականներու ճնշումին տակ, կը փորձէ իր ազնիւ վերադարձնել ինչ աստուածներու պաշտամունքին: Երբ չի յաջողիր՝ Արտաղի մէջ բնաւորելով եւ զանազան զրկանքներու մասնակցէլ ետք, միտակց սպաննել կու տայ թէ՛ հարազատ դուստրը Սանդուխտ, թէ՛ Թաղէոս Առաքել:  
Մինչ այդ, նահատակ Առաքելայ ընդարձակ քարոզչութիւն կատարած ըլլալով Արտաղ գաւառին մէջ, շուրջ 66 թուին՝ հաստատեցաւ Ժողովուրդը իր յիշատակին հիմնած էր արդէն վանք մը Թաղէոս Առաքելի կամ Թաղէի վանք անունով, որ դարձրու ընթացքին բարգաւաճելով, գարձաւ հայ ժողովուրդի հոգեւոր կարեւոր կեդրոններէն մին:

Վանքի մասին յիշատակութիւն ունի Պատմահայր Մովսէս Պարեանցին իր ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ գրքին մէջ:  
Ժ՛- դարուն, զորաւոր երկրաբարբի մը հետեւանելով վանքն ու եկեղեցին թէն փուլ կու գան, բայց շատ չանցած՝ կը վերակառուցուին:  
Վանքին բարի եւ սուրբ համբաւը հրապուրած է նոյնիսկ օտարականներն ու մահմետականները, որոնցմէ շատեր մինչեւ այսօր ուխտի կ'ընթան հոն: Ներկայիս կը գտնուի Պարսկաստանի Հիւսիս-արեւմրտեան մայրամասը, Մակու քաղաքէն 20 զիլոմեթր հեռավորութեան վրայ:  
Ս. Թաղէոսի վանքը այժմ ենթակայ է Իրանի հայոց Ատրպատականի Թեմական Թորհուրդի խնամքին: 1953-էն ի վեր, հոն կը կազմակերպուի ուխտառեացութիւն, Յուլիս ամսուան ընթացքին:

Վաճժի՞ Խաւարիչը իր ամբարշտութեամբ մէջ, որպէս քրիստոնէական հնագոյն եւ ճարտարապետական բարձր արժէք Անկախացեալ կեդրոն, մաս կը կազմէ Իրանի պետութեան եւ ԵՈՒՆԵՍԿՈՒՄԻ կողմէ ընդունուած՝ ուշադրութեան արժանի պատմական յուշարձաններու ցանկին:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

LUKE 13

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(13.1-9)

1 Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլէ-  
իացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպան-  
2 նուեցան, երբ Աստուծոյ դահ կը մատուցանէին Յի-  
սուս անոնց ըստ. «Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլէ-  
իացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր  
3 էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ  
ձեզի, որ եթէ չսպաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս  
4 պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն ատանքութ  
մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելու-  
վամի մէջ եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցա-  
5ւոր էին քան Նրուսաղէմի բոլոր բնակիչները: Ո՛չ:  
Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չսպաշխարէք՝ բոլորդ ալ նոյն-  
պէս պիտի մեռնիք»:

6 Անոնց հետեւեալ առաւել պատմեց. «Մարդ մը  
կար որ իր այգիին մէջ թղենի մը տնկած էր: Երբ մա-  
մանակը եղաւ, թուղ քաղելու. դնաց, բայց թղենիին  
7 վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ  
տարին է որ կու դամ թուղ քաղելու, բայց չեմ գտներ:  
Ուստի կտրէ՞ դայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ  
8 գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, թող այս  
տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ  
9 պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ  
տայ. ապա թէ ոչ՝ դալ տարի կտրէ դայն»:

There were some present at that very time who told him of the Galileans whose blood Pilate had mingled with their sacrifices. <sup>2</sup>And he answered them, "Do you think that these Galileans were worse sinners than all the other Galileans, because they suffered thus? <sup>3</sup>I tell you, No; but unless you repent you will all likewise perish. <sup>4</sup>Or those eighteen upon whom the tower in Sil'om fell and killed them, do you think that they were worse offenders than all the others who dwelt in Jerusalem? <sup>5</sup>I tell you, No; but unless you repent you will all likewise perish."

6 And he told this parable: "A man had a fig tree planted in his vineyard; and he came seeking fruit on it and found none. <sup>7</sup>And he said to the vine-dresser, 'Lo, these three years I have come seeking fruit on this fig tree, and I find none. Cut it down; why should it use up the ground?' <sup>8</sup>And he answered him, 'Let it alone, sir, this year also, till I dig about it and put on manure. <sup>9</sup>And if it bears fruit next year, well and good; but if not, you can cut it down.'"



Անպտուղ թղենիին (Ղուկ. ԺԳ. 8-9) առաւել էրեայ ապիւին կրօնական անասորքերութիւնը ի յայտ կը բերէ: Հրեաները Աստուծոյ տուած պատեհութիւնները չարաչար դարձածած էին, Յիսուսի աշխարհ դալը վերջին պատեհութիւն մըն էր, տսիկա եւս չէին գնահատած:

Երբ Յիսուս Պերէայի մէջ աւետարանական պատյոններ կ'ընէր, Երուսաղէմի մէջ պատահած երկու արկածներու լուրը թերին իրեն:

Աստի մը Գալիլիացիներ Երուսաղէմ եկած էին՝ աստուարին մէջ զոհ մատուցանելու, սակայն այդ առթիւ շիրթութեան եւ խառնութեան տեղի տուած էին: Հրէաստանի կառավարիչ Պիղատոս՝ պարտաւորուած էր անոնց վրայ շեղանական զինուորներ զրկել: Գալիլիացիներ գիմարութեան յանդերձան էին, երկուստեք զէնք գործածուած էր, եւ բաւական թիւով Գալիլիացիներ զոհին ստան սպաննուած էին, եւ զոհին արիւնը Գալիլիացիներու արիւնին հետ խառնուած էր:

Միւս արկածը աւելի սրտառհաղան էր: Երուսաղէմի մէջ Սելուլի կամ Սելուլամի աւազանին մօտ կայտ քաղաքին աշտարակներէն մէկը յանկարծ փլած էր, եւ սասնութ Երուսաղէմցիներ փրտուսկին ներքեւ մնացած ու մեռած էին:

Երկու արկածներուն վրայ ալ արագին սրամտութիւններէ յիշատակութիւն չունինք. բայց Աւետարանի սրամտութիւնը բաւական է անոնց իրականութիւնը հաստատելու: Սելուլամի աշտարակին փլչիլը պարզ պատահական զխոլուած մըն է, իսկ Գալիլիացիներու մասին մեկնիչներու կարծիքն է, թէ ստանք ճետեւողներէն էին Յուդա Գալիլիացիի (Գործ. Կ. 39) կամ Յուդա Գաւաղացիի, որ Յիսուսի ծննդեան տարին իբր Մելիա հրապարակ ելած էր, եւ ժողովուրդին մէջ դժտութիւն առաջ բերած էր: Ընքն Յուդա արդէն սպաննուած էր, բայց իւր հետեւողներէն կային տակաւին Նախանձայոյ կոչուած իմբակներ, եւ հաւանաբար տոնցմէ էին Երուսաղէմ եկող եւ զոհին առթիւ շիրթութիւն հանող Գալիլիացիներ, զորս Պիղատոս հարկապարտուած էր պորութեամբ զտնել:

Փարիսեցիներ երկու արկածներն ալ իբր յանցաւորներուն զլխուն Աստուծոյն զրկուած սրտով մը բացատրած էին, եւ ժողովուրդն ալ նոյն համոզումը սենէր, եւ այդ տեսակէտէն էր արկածներուն Յիսուսի պատժուելուն առթիւ: Յիսուս չմերձեց այդ մեկնութիւնը: Ստորջ ալ՝ յաճախ աստուածային բարեկաթեան արդիւնք են աշխարհային արկածներ, եւ այդ համոզումը ընդհանուր է մտէն կրօնքներու մէջ: Միայն թէ՛ եթէ ստանք իբր մեղաւորներ աստուածային պատժոյ ներքեւ կ'իջնային, ըսել չէր թէ աստուծոյն տեղի կամ աստուծոյն դատ արիւ մեղաւորներ չկային Երուսաղէմի մէջ:

Այդ տեսակէտէն է որ Յիսուս այդ արկածներուն վրայ կը խօսի. «Մի՛ կարծէք, կ'ըսէ, որ այդ Գալիլիացիներէ եւ այդ Սելուլամցիներէ զատ ուրիշ մեղաւոր չկար Երուսաղէմի մէջ, որովհետեւ անոնք միայն պատժուեցան, եւ ուրիշներ անխորժ մնացին: Աստուածային գթութիւնը իւր ամէնիմաստ տեսութեամբ երկայնամիտ է մեղաւորներուն վրայ. անոնց ստան կու տայ զղջալու եւ սպաշխարելու եւ արդարանալու, եւ միայն երբ կը տեսնէ որ իւր ներողամտութենէն չեն օգտուիր, շարհուած ժամանակին մէջ չեն սպաշխարեր, եւ անապաշաւ կը մնան, այն ստան միայն կը դադրեցնէ գթութիւնը, ձեռք կ'առնէ արդարութիւնը եւ կը հասցնէ պատիժը: Այն Գալիլիացիներու եւ Սելուլամցիներու վրայ լրացած էր աստուածային գթութեան շափը, եւ սրտիժնին գտան: Բայց եթէ դուք ամէնքնիկ ալ, որ անոնց վրայ խիստ դատաստաններ կը խօսիք, եթէ դուք ալ ձեզի շտրհուած ժամանակէն յողտուիք ու չապաշխարէք, պիտցած եղէք որ ամենապէ գլուխն ալ դաշիք փորձանքը նոյն է, դուք ալ նմանորինակ պատիժներով պիտի կորսուիք: Յիսուս ըստ իւր տղարութեան, այդ արկածներէն ալ օղտակար խրատ մը հանելով, ժողովուրդին կը քարոզէր:

ԱՆՊՏՈՒՂ ԾԱՌԻՆ ԱՌԱԿԸ

Ղա.կ. ԺԳ. 6-9

Աստուածային զթութիւնը եւ մեղաւորներու վրայ ցուցած ներողաւորութիւնը աւելի լուրջ քաղաքեղութեամբ, Յիսուս զեղեցիկ առակ մը կը խօսի: Տանուտէր մը պտղատու ծառերու այլի մը ունէր, եւ անոր մէջ գեղեցիկ թփերի մը կտր: Թանուտէրը ատեն-ատեն կու դարձնէր սրտուղ քաղէր, բայց միշտ յուսախար կը դառնար: Ծառը սրտուղ չունէր, տարիներ կը կրկնուէին, բայց պտղաբերութիւնը չէր հասնիր: Այսպէս անուկ երեք տարի ամբողջ: Վերջապէս յուսահատ, եւ տեսնելով թէ պարապ տեղ պարտեցին մէջ բաւական տեղ կը դրուէ, եւ թէ անոր տեղ հնար էր ուրիշ պտղատու ծառ մը անկել, բարկութեամբ մը կը դառնայ եւ պարտեց պանին կը հրամայէ, որ ծառը կտրէ ու վերցնէ, եւ շտրպելով վառելաքարի պէտքերը:

Պարտեցումը, որ բաւական աշխատութիւն թափած էր այն ծառին վրայ, կը սկսի ազաչել եւ խնդրել, որ տարի մըն ալ համբերութիւն ունենայ, ինքը այդ տարւոյն մէջ իւր վերջին ճիշդ պիտի թափէ, չորս կողմէ հողը պիտի կահոցնէ, արմատները պիտի ազրէ, կանոնաւորապէս պիտի ունայ, եւ եթէ անկէ ետքն ալ դալ տարին սրտուղ չտայ, այն ատեն ինքն ալ պիտի հաւանի կտրելու եւ վերցնելու:

Ատակը հաս կը վերջանայ, այնպէս ցուցնելով որ աստուտէրը զիջած է պարտեցումն ազաչանքին: Ատակին իմաստը ոչ թէ լոկ ընդհանուր կերպով մեղքին եւ մեղքի պատժոյն համար է, այլ կը դիտէ եւս հրէական ժողովուրդին Յիսուսի քարոզութեանց հանդէպ ցուցած անտարբերութիւնը: Տանուտէրը՝ Երկնաւոր Հայրն է, պարտեցումը՝ Յիսուս է, անպտուղ ծառը՝ հրէական ժողովուրդն է: Այդչափ քարոզութիւններէ ետքը, եւ ճիշդ ու ճիշդ Յիսուսի երեք տարիներու քարոզութիւններէն ետքը, տակաւին այսպիսորութեան եւ հուսաբքի սրտուղ չի ցուցնիր: Հայր Երկնաւոր կ'ուզէ զայն կտրել ու նետել: Յիսուս կը միջնորդէ միջոց մը եւս համբերել: Այդ միջոցը կը տրուի իրաւ, սակայն Հին Ռախտի մարդիկ այդ ժամանակը կը գործածեն Յիսուսի դէմ ելլելու: Անկէ ետքն ալ դեռ միջոց կ'ունենան, բայց միշտ նոյն հակառակութիւնը Նոր Ռախտի դէմ, մինչեւ որ Հին Ռախտը կը քանդուի սաստիկ կործանումով: